# Օգտագործման ցուցումներ

Դեղն ընդունելը նախորդող երեկոյան

*Ցուցումներ Ձեր բժշկի կողմից*

*Ձեր բժիշկը ձեզ հաստ աղիքի մաքրման համար* PLEINVUE® *է նշանակել գալիք բուժգործողությանը նախապատրաստվելու համար:* **Ուշադիր կարդացեք այս տուփի ներդիրն ամբողջությամբ՝ նախքան այս դեղորայքն ընդունելը, և միշտ այն ընդունեք ճշգրտորեն՝ ինչպես նկարագրված է այս ներդիրում կամ ինչպես որ հրահանգել են ձեր բժիշկը կամ դեղագործը:** Լրացուցիչ կարևոր տեղեկատվության համար՝ ներառյալ Pleinvue®-ի վերաբերյալ հատուկ նախազգուշացումները, կողմնակի ազդեցությունները և պահպանման պահանջները, տե՛ս փաթեթի տեղեկատվական թերթիկը:

*Ցուցումներ, թե ինչ ուտել օրվա ընթացքում քննությունից առաջ.*

- *թեթև նախաճաշ*
- *թեթև լանչ (դա պետք է ավարտել առնվազն 3 ժամ առաջ՝ նախքան առաջին դեղաչափն ընդունելը)*

*ԱՌԱՎՈՏ*
*Մոտավորապես առավոտյան ժամը 6-ի և 10-ի միջև*

*ԼԱՆՉ*
*Մոտավորապես կեսօրից՝ ժամը12-ի և կեսօրն անց ժամը 2-ի միջև*



*Մի կերեք որևէ պինդ կերակուր Pleinvue®-ն ընդունելն սկսելուց հետո մինչև կլինիկական գործողության ավարտը:*

*Մի խմեք ալկոհոլ, կաթ, կարմիր կամ մանուշակագույն խմիչքներ (ինչպես, օրինակ՝ սև հաղարջի հյութը) կամ պտղամիս պարունակող որևէ այլ խմիչք:*

*ԵՐԵԿՈ*



## Պատրաստումը

*1 տուփ* Pleinvue®*-ն պարունակում է ընդհանուրը 3 սաշե: Դեղաչափ 1-ի համար՝ 1 սաշե*
Դեղաչափ 2-ի համար՝ 2 սաշե (A+B)




### ԴԵՂԱՉԱՓ 1



*Դատարկեք դեղաչափ 1-ի պարունակությունը այնպիսի տարայի մեջ, որը կարող է տեղավորել առնվազն 500 մլ հեղուկ:*



***Ջուր ավելացրեք մինչև 500 մլ: Լավ խառնեք, մինչև փոշին լուծվի: Այս գործողությունը կարող է տևել մինչև 8 րոպե:***

### ԴԵՂԱՉԱՓ 2




*Պատրաստել 2 դեղաչափի պարունակությունը (սաշե Ա և Բ) նույն ձևով, ինչպես և նշանակված ժամանակ:*

*Պատրաստելուց հետո* Pleinvue® *-ն կարելի է անմիջապես խմել կամ ծածկած պահել 25°C ջերմաստիճանի ներքո կամ մինչև 24 ժամ՝ սառնարանում:*

## Դեղն ընդունելը
### Դեղաչափ1 քննության օրվան նախորդող երեկոյան

Դեղաչափ 1 PLEINVUE®*



\+

Թափանցիկ հեղուկ**



0.5 լ | բոլորը 0.5 լ



**Pleinvue-ն, ինչպես նաև լրացուցիչ թափանցիկ հեղուկը խմեք չափաբաժիններով և կումերով՝ առնվազն 1 ժամվա ընթացքում:***

Աշխատեք մոտ գտնվել ազատ զուգարանի, հենց որ սկսում եք լուծույթը խմել:



ԸՆԴՈՒՆԵԼ ՄԻԱՅՆ ԲԺՇԿԻ ՑՈՒՑՄԱՄԲ

Օր/ժամ

*Դուք կարող եք թափանցիկ հեղուկ խմել նախքան Pleinvue® ընդունելը, այն ընդունելու ընթացքում կամ դրանից հետո՝ ջրազրկվելուց խուսափելու համար:

**ջուր, արգանակ, մրգահյութ առանց պտղամսի, զովացուցիչ խմիչքներ, թեյ և/կամ սուրճ առանց կաթի

## Դեղն ընդունելը
### Դեղաչափ 2 (≥2 ժամ հետո)

Դեղաչափ 2 (A+B) PLEINVUE®*



\+

Թափանցիկ հեղուկ**



0.5 լ | բոլորը 0.5 լ



**Pleinvue-ն, ինչպես նաև լրացուցիչ թափանցիկ հեղուկը խմեք չափաբաժիններով և կումերով՝ առնվազն 1 ժամվա ընթացքում:***

Աշխատեք մոտ գտնվել ազատ զուգարանի, հենց որ սկսում եք լուծույթը խմել:



ԸՆԴՈՒՆԵԼ ՄԻԱՅՆ ԲԺՇԿԻ ՑՈՒՑՄԱՄԲ

Օր/ժամ

*ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ. Pleinvue-ն խմեք սառեցված և/կամ ձողիկի միջոցով: Pleinvue-ից առաջ խմեք տաք թեյ՝ ստամոքսը <<տաքացնելու>> համար, կամ էլ ընդունեք խմեք մի քանի կում տաք թեյ՝ Pleinvue-ի կումերի միջև: (Բուսական թեյերը, ինչպիսիք են կանաչ թեյը, պատրինջը, կճապղպեղը կամ կիտրոնի թեյը): Այս ժամանակահատվածներում մաստակ ծամեք , մենթոլի համով կոնֆետ կերեք կամ էլ կիտրոնի կամ նարնջի կտորներ:*

## Քննություն



ԸՆԴՈՒՆԵԼ ՄԻԱՅՆ ԲԺՇԿԻ ՑՈՒՑՄԱՄԲ

Օր/ժամ



Դադարեցրեք որևէ հեղուկ ընդունելը՝

- ընդհանուր անզգայացմամբ կլինիկական գործողությունից երկու ժամ առաջ, կամ
- առանց ընդհանուր անզգայացման կլինիկական գործողությունից **մեկ ժամ առաջ**

*Խնդրում ենք խմելը վերջացնելուց հետո բավարար ժամանակ հատկացնել կոլոնոսկոպիայի գնալու համար:*
***ԿԱՐԵՎՈՐ Է՝ Ձեզ չի թույլատրվում մեքենա վարել ընդհանուր անզգայացման պայմաններում զննում անցնելուց հետո: (Ապահովագրության ծածկույթ չկա)***

PLEINVUE-ի, NORGINE-ի և Norgine sail-ի լոգոները գրանցված ապրանքանիշներ են Norgine Group-ի: 11/2022 AT-GE-PLV-2200046 (PM) ARM

Norgine Pharma GmbH
Euro Plaza 5, Kranichberggasse 4, 1120 Wien
Tel: +43 1 817 81 20, info@norgine.at